

Սայրի էսֆինեան, ժընէվէն, ներկայացնելով Կեդրոնական Յանձնարարութիւնը Սուրբ Երկրի Քրիստոնեայ համայնքներու կացութեամբ եւ մտահոգութիւններով:

ԵՂ. 12 Օգոստոս.— Ժընէվէն Օր. Սայրի էսֆինեան, Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի Կեդրոնական Յանձնարարութիւնը քարտուղարուհին, Պատրիարքարան այցելեց, ընկերակցութեամբ Միջին Արեւելի եկեղեցիներու Խորհուրդի Երուսաղէմի Գրասենեակին Ընդհանուր Վարիչ Հրաչ Յակոբեանի հետ, աւելի մանրամասն

խորհրդակցութիւն ունենալով Պատրիարք Արքազան Հօր հետ, Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի առնելի՛ համիջական եւ գործնական ձեռնարկներու կապակցութեամբ:

ԵՂ. 2 Սեպտ.— Երուսաղէմի Իտալական Հիւպատոսի եւ իր տիկնոջ պաշտօնով տեղափոխման առիթով Ամերիկէն Գոլոնի Պանդոկի պարտեզին մէջ տրուած ողբերթի հիւրասիրութեան ներկայ գտնուեցաւ Պատրիարք Արքազան Հայրը, ընկերակցութեամբ Սեան Սպա. Ղարիպեանի, Համբարձում Վրդ. Քէշիշեանի եւ Թեոդորոս Աբդ. Զաքարիանի:

ՀՐԱՏԱՐԱԿԶԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՏՈՒՆՈՒՄ ԶՕՀՐԱՊ ԼԻՊՄԱՆ ՀԻՄՆԱԴԻՄԱՄ

Հանդիման կը հաղորդենք, թէ Տոյորէն Զօհրապ Լիպման Հիմնադրամը նիւթապէս պիտի օժանդակէ որ հրատարակուին ընտրեալ

ա. վարդապետական աւարտաճառեր հայագիտական նիւթերու մասին,

բ. հայոց հին պատմութեան երկեր հայ պատմաբաններու,

գ. 19րդ դարու եւ աւելի վաղ շրջանի հայ գրականութեան երկեր:

Ներկայացուող աշխատասիրութիւնները կրնան ըլլալ կա՛մ հայերէն կա՛մ անգլերէն լեզուով: Եթէ գործ մը հայերէն լեզուով է, անոր պէտք է ընկերանայ անգլերէն որակաւոր թարգմանութիւնը:

Դիմումագիրները ներկայացնել ամէն տարուան Ապրիլ 15 եւ Նոյեմբեր 15 թուականներէն առաջ:

Յաւելուածական տեղեկութեան եւ դիմումագրի թերթիկ ստանալու համար դիմել

THE DOLORES ZOHRAH LIEBMANN FUND
PUBLICATIONS PROGRAM

Attn: Mr. Suren D. Fesjian
661 Hillside Rd., P.O.B. 889
Pelham Manor, NY 10803